

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՈՐՈՇՈՒՄ

04 դեկտեմբեր 2017, № 21. 5.1

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՄԻՆՉԻ 64 ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԺԱՄՈՎ  
ԱՌԱՐԿԱՆԵՐԻ և IV ԿՈՒՐՍԵՐԻ ԱՍՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

ՇՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաղորդված տեղեկատվությունը ընդունելի գիտություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

**Բակալավրիատի կրթական ծրագրով մինչև 64 լսարանային ժամով  
առարկաների և 4-րդ կուրսերի ամփոփիչ ստուգումների  
ժամանակացույցի փոփոխման մասին**

2017-2018 ուստարվա բակալավրի առկա /հեռակա, մագիստրոսի և հետազոտողի (ասպիրանտուրա) կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի հերթերի ժամատախտակի, ուսումնական գործընթացի և խորհրդատվությունների կազմակերպման, գիտելիքների գնահատման, լուծարքային շրջանի կազմակերպման, ամփոփիչ ատեստավորման և պրակտիկաների կազմակերպման ժամանակահատվածների մասին N 168 հրամանով նախատեսված է

- բակալավրի առկա ուսուցման համակարգում մինչև 64 լսարանային ժամով առարկաների առաջին կիսամյակում ամփոփիչ ստուգումներն իրականացնել 2017 թ.-ի դեկտեմբերի 20-ից 25-ն ընկած ժամանակահատվածում,
- իսկ չորրորդ կուրսի առաջին կիսամյակում, անկախ լսարանային ժամերի ծանրաբեռնվածությունից, իրականացնել միայն ամփոփիչ ստուգում՝ 2017թ.-ի դեկտեմբերի 12-ից մինչև 2018թ.-ի հունվարի 20-ն ընկած ժամանակահատվածում:

Ֆակուլտետների ղեկանների և ամբիոնի վարիչների ժամանակավոր պաշտոնակատարների հետ խորհրդակցությունների արդյունքում պարզվեց, որ ուսումնական պլաններով նախատեսված պարապմունքներն ամբողջ ծավալով իրականացնելու, ինչպես նաև ուսանողներին ամփոփիչ ստուգումներին նախապատրաստվելուն բավարար ժամանակ տրամադրելու համար առավել նպատակահարմար է

- *բակալավրի առկա ուսուցման համակարգում մինչև 64 լսարանային ժամով առարկաների առաջին կիսամյակում ամփոփիչ ստուգումներն իրականացնել 2018 թ.-ի հունվարի 8-ից 20-ն ընկած ժամանակահատվածում,*

- *իսկ չորրորդ կուրսի առաջին կիսամյակում, անկախ լսարանային ժամերի ծանրաբեռնվածությունից, իրականացնել միայն ամփոփիչ ստուգում՝ 2018թ.-ի հունվարի 8-ից 30-ն ընկած ժամանակահատվածում:*